ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2017/12/11

ք. Երևան «11» դեկտեմբերի 2017թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Գագիկ Համբարձումի Կարապետյանը, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է և վճարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, այսուհետ «Աշխատանք»:

1.2. Աշխատանքը բաղկացած է.

Ընկերության Չարենցավանի հեռուստակայանը սնող 10 կՎ լարման օդային գծի բարձր լարման 2 մեկուսիչների փոխարինում նորով և սնուցման գծի վերականգնում:

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերը ապահովում է Կատարողը:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում 2017թ. դեկտեմբերի 11-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում հանձնման-ընդունման ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի համար պայմանագրային գին է սահմանվում 28.000 /քսանութ հազար/ ՀՀ դրամ:

2.2. Վճարումը կատարվում է փոխանցումով՝ Աշխատանքի ավարտից և հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

*Պատվիրատու՝*

*ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95*
*Յունիբանկ ԲԲԸ*
*Հ/հ 24100200177400*
*ՀՎՀՀ 01501898*

*Գլխավոր տնօրեն*

*Գ. Ալոյան*

*Կատարող՝*

*Կարապետյան Գագիկ*
*Անձնագիր AM0928369, տրված 019,05.11.2012թ.*
*ՀԾՀ 1107530040*
*Կոտայքի մարզ,գ. Ջրաբեր, 5 փող., 6 տ.*
*Հ/հ 220111055525000*

*Գ. Կարապետյան*

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀՌՑ ՓԲԸ գլխավոր տնօրենի
տեղակալ

Ս. Դավթյան

11.12.2017թ.

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

Մենք, ներքոստորագրյալներս, ՀՀՌՑ ՓԲ ընկերության էներգետիկական ծառայության պետ Ալբերտ Պողոսյանը, Կենտրոն տարածքային բաժնի պետ Ասքանազ Արշակյանը, մի կողմից, և Կատարող Գագիկ Կարապետյանը, մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին.

-համաձայն 11.12.2017թ. կնքված աշխատանքների կատարման թիվ 2017/12/11 քաղաքացիա-իրավական պայմանագրի, Կատարող Գ. Կարապետյանի կողմից իրականացվել է ընկերության Չարենցավանի հեռուստակայանի 10կՎ լարման օդային գծի կոտրված 2 մեկուսիչների փոխարինում և սնուցման գծի վերականգնում:

Աշխատանքները կատարվել են ժամանակին ու որակով, և հանձնվել են Պատվիրատուին, որի համար ստորագրում ենք:

Ընդունեց

Ա. Պողոսյան

Ա. Արշակյան

Հանձնեց

Գ. Կարապետյան